ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2025 թվականի օգոստոսի 26-ի N 60-Լ

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի ԹԻՎ 2/1 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, 16-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածների 6-րդ մասերով, 19-րդ հոդվածի 4-րդ մասով, 20-րդ հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաշվեքննիչ պալատի 2018 թվականի մայիսի 10-ի «Հաշվեքննիչ պալատի կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 2/1 որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման նախաբանը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և 20-րդ հոդվածով՝ Հաշվեքննիչ պալատը».

2) Որոշման հավելվածի (այսուհետ՝ Հավելված) 15-րդ կետում «Հաշվեքննիչ պալատի գլխավոր քարտուղարի տեղակալը,» բառերը հանել, իսկ «կառուցվածքային» բառից առաջ լրացնել «հիմնական» բառը.

3) Հավելվածը լրացնել նոր 15.1-ին կետով հետևյալ բովանդակությամբ.

«15.1. Հաշվեքննիչ պալատի նախագահին հաշվետու են աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, գլխավոր քարտուղարի տեղակալը:»

4) Հավելվածի 16-րդ կետում «կոմիտեներ» բառից հետո լրացնել «, որոնք կարծիք են ներկայացնում Հաշվեքննիչ պալատի նիստում քննարկման ներկայացվող իրենց ոլորտներին վերաբերող և Հաշվեքննիչ պալատի նախագահի կողմից կոմիտեներին կարծիքի ներկայացված որոշումների նախագծերի վերաբերյալ, բացառությամբ այն նախագծերի, որոնց վերաբերյալ պետք է ներկայացնեն օրենքով սահմանված մասնագիտական եզրակացություն: Ընդ որում, կածիքը պետք է պարունակի տեղեկատվություն այն մասին, թե ինչ ստանդարտներ, մեթոդաբանություններ և ուղեցույցներ են կիրառվել տվյալ կարծիքի ձևավորման գործընթացում:» բառերը.

5) Հավելվածի 30-րդ կետի 4-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել.

6) Հավելվածի ողջ տեքստում «աշխատանքային քննարկում» և «աշխատանքային քննարկումներ» բառերը և դրանց հոլովաձևերը համապատասխանաբար փոխարինել «նիստ» և «նիստեր» բառերով և դրանց հոլովաձևերով.

7) Հավելվածի 31-րդ, 44-րդ, 51-րդ և 58-րդ կետերում լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ՝

«Նիստը, ըստ անհրաժեշտության, կարող է անցկացվել հեռավար (առցանց) կամ գրավոր ընթացակարգով:».

8) Հավելվածում լրացնել նոր 31.1-ին կետ հետևյալ բովանդակությամբ՝

«31.1. Դիմում կարող են ներկայացնել Հաշվեքննիչ պալատի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները՝ կոմիտեի իրավասությունների շրջանակում գտնվող հարցերի քննարկման նպատակով:».

9) Հավելվածում լրացնել նոր՝ 36.1-ին, 36.2-րդ, 36.3-րդ և 36.4-րդ կետեր հետևյալ բովանդակությամբ՝

«36.1.Կոմիտեի քվորումն ապահովվում է անդամների մեծամասնության մասնակցությամբ: Քվեարկության ժամանակ Կոմիտեի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Կոմիտեի կարծիքը համարվում է ընդունված կոմիտեի առնվազն 2 անդամի կողմ քվեարկելու դեպքում:

36.4. Կոմիտեն կարծիքը ներկայացնում է նախքան Հաշվեքննիչ պալատի համապատասխան նիստի գումարումը:» :

10) Հավելվածի 38-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «38. Գործադիր կոմիտեի նիստն արձանագրվում է»:

11)Հավելվածի 39-րդ, 46-րդ, 53-րդ և 60-րդ կետերում կետում լրացնել նոր նախադասություններ հետևյալ բովանդակությամբ՝

«Արձանագրությունն ուղարկվում է կոմիտեի անդամներին, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև այլ պաշտոնատար անձանց՝ տեղեկացման միջոցով: Արձանագրությունը տեղադրվում է ինչպես նաև տղեկացվում է Հաշվեքննիչ պալատի անդամներին:»

12) Հավելվածի 43-րդ, 50-րդ և 57-րդ կետերի 1-ին ենթակետում «տասնօրյակում,» բառից հետո լրացնել «(2025 թվականի չորրորդ եռամսյակի ծրագիրը հաստատվում է մինչև 2025 թվականի հոկտեմբերի 2-ը) » բառերը , իսկ «աշխատանքային քննարման արձանագրությամբ» բառերը փոխարինել «որոշմամբ» բառով, ինչպես նաև Հավելվածի 43-րդ և 50-րդ կետերի 8-րդ և 57-րդ կետերի 7-րդ ենթակետերում՝ «հաշվետվություն» բառը փոխարինել «հաղորդում» բառով, և «հաղորդում» բառից հետո լրացնել «(բացառությամբ 2025 թվականի հաղորդումների, որոնք ներկայացվում են միայն չորրորդ եռամսյակի համար) » բառերը:

13) Հավելվածում լրացնել նոր՝ 44.1-ին, 44.2-րդ, 44.3-րդ և 44.4-րդ կետեր հետևյալ բովանդակությամբ՝

«44.1.Կոմիտեի քվորումն ապահովվում է անդամների մեծամասնության մասնակցությամբ: Քվեարկության ժամանակ Կոմիտեի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Կոմիտեի որոշումներն, ինչպես նաև սույն կանոնադրության 16-րդ կետով նախատեսված կարծիքը համարվում են ընդունված կոմիտեի առնվազն 2 անդամների կողմ քվեարկելու դեպքում:

44.4. Կոմիտեն կարծիքը ներկայացնում է նախքան Հաշվեքննիչ պալատի համապատասխան նիստի գումարումը:».

14) Հավելվածում լրացնել նոր՝ 51.1-ին, 51.2-րդ, 51.3-րդ և 51.4-րդ կետեր հետևյալ բովանդակությամբ՝

«51.1.Կոմիտեի քվորումն ապահովվում է անդամների մեծամասնության մասնակցությամբ: Քվեարկության ժամանակ Կոմիտեի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Կոմիտեի եզրակացությունը, ինչպես նաև սույն կանոնադրության 16-րդ կետով նախատեսված կարծիքը համարվում է ընդունված կոմիտեի առնվազն 2 անդամների կողմ քվեարկելու դեպքում: Կոմիտեն կարծիքը ներկայացնում է նախքան Հաշվեքննիչ պալատի համապատասխան նիստի գումարումը:».

15) Հավելվածում լրացնել նոր՝ 58.1-ին, 58.2-րդ, 58.3-րդ և 58.4-րդ կետեր հետևյալ բովանդակությամբ՝

«58.1.Կոմիտեի քվումն ապահովվում է անդամների մեծամասնության մասնակցությամբ: Քվեարկության ժամանակ Կոմիտեի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Կոմիտեի եզրակացությունը, ինչպես նաև սույն կանոնադրության 16-րդ կետով նախատեսված կարծիքը համարվում է ընդունված կոմիտեի առնվազն 2 անդամների կողմ քվեարկելու դեպքում: Կոմիտեն կարծիքը ներկայացնում է նախքան Հաշվեքննիչ պալատի համապատասխան նիստի գումարումը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ